ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2020 թվականի N 285-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 23-ի N 8 արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. ***Հայկ Համլետի Մկրտչյանին*** 2020 թվականի հուլիսի 27-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի *Առինջ* համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի իր պարտականությունների ստանձնումը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2020 թվականի հուլիսի 27
ք. Հրազդան